Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
հոկտեմբերի 29-ի N 1555 - Ն որոշման

Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

1. Սույն պահանջներով սահմանվում են ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկումը գնման գործընթացի միջոցով կազմակերպելու դեպքում տրանսպորտային միջոցին ներկայացվող նվազագույն պահանջները և պայմանները:

2. Ներհամայնքային երթուղիները (բացառությամբ բազմաբնակավայր համայնքների բնակավայրերի միջև) սպասարկող բոլոր տրանսպորտային միջոցները պետք է մատչելի լինեն տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) և համապատասխանեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի կամ հարմարեցված ԳՕՍՏ 30478-96 ստանդարտի պահանջներին:

3. Ներհամայնքային երթուղիները սպասարկող բոլոր տրանսպորտային միջոցները պետք է բավարարեն «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» ՄՄ 018/2011 տեխնիկական կանոնակարգի պահանջները և կահավորված լինեն տեղորոշման համակարգով:

4. Գնման գործընթացի միջոցով կազմակերպվող ներհամայնքային երթուղիների սպասարկման ծառայությունների ձեռքբերման տեխնիկական բնութագրում տրանսպորտային միջոցների չափորոշիչները սահմանվում են համապատասխան համայնքի կողմից՝ համաձայն N 1 ձևի:

Ձև N 1

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

NN ը/կ	**Անվանումը**
1.	**Ընդհանուր պահանջներ՝** - Շարժակազմի տիպ - Շարժակազմի տեսակ - Արտադրման տարեթիվ
1)	**Տեղատարողություն՝** - ընդհանուր տեղատարողություն, ուղևոր - նստատեղերի քանակ, հատ - շարժակազմի սրահում հաշմանդամություն ունեցող անձանց համար կահավորված նստատեղերի քանակ, հատ
2)	**Տրանսպորտային միջոցի եզրաչափեր**
ա.	- երկարություն, մմ - լայնություն, մմ - բարձրություն, մմ
3)	**Այլ չափեր**
ա.	Հատակի բարձրությունը երթևեկելի մասից, մմ
բ.	Թույլատրելի առավելագույն քաշը ոչ ավելի, տոննա
գ.	Մոտեցման և հեռացման անկյուններ ոչ պակաս, աստիճան (′)
2.	**Շարժիչ**
1)	Շարժիչի տեսակ
2)	Շարժիչի հզորություն, կՎտ
3)	Բնապահպանական դաս
4)	Օգտագործված վառելիքի տեսակ
5)	Շարժիչի տեղակայման վայրի պահանջներ
6)	Վառելիքի մատակարարման համակարգի պահանջներ
7)	Վառելիքի խնայողության պահանջներ
3.	**Փոխանցման տուփ և ղեկային համակարգ**
1)	Փոխանցման տուփ
2)	Կամրջակներ
3)	Ղեկային կառավարման համակարգ
4.	**Կախոցներ**
5.	**Անիվներ**
1)	Անվադողեր, տեսակ
2)	Անիվներ, չափսեր

6.	**Արգելակման համակարգ**
1)	Աշխատանքային ռեժիմի պահանջներ
2)	Կայանման ռեժիմի պահանջներ
3)	Պահեստային մասերի պահանջներ
4)	Օժանդակ պահանջներ
7.	**Թափք**
1)	Դռներ
2)	Բռնակներ և ձողեր
3)	Ուղևորի կողային դռան շարժիչ մեխանիզմ
8.	**Սրահ**
1)	Հատակ
2)	Ապակիներ՝ դիմապակի, կողային և հետևի ապակիներ
3)	Սրահի միջնորմ, վարորդի նստատեղի տարանջատում և դռների մուտք
4)	Էլեկտրոնային ենթակարգավորման սարքավորումների և տեղակայման համար սահմանված չափորոշիչներ
5)	Դուռը բացելու ազդանշան տալու վարորդի սեղմակոճակ
6)	Հաշմանդամություն ունեցող անձանց նստեցման-իջեցման մուտքի մատչելիության ապահովում
7)	Ուղևորների տեղեկատվական համակարգ
8)	Ուղևորների նստատեղեր, հատ
9)	Վարորդի խցիկ և աշխատանքային վայր
10)	Նստատեղերի դասավորվածության համապատասխանությունը տվյալ փոխադրմանը
11)	Նստատեղերի համար նախատեսված նյութ
9.	**Տաքացման, հովացման և օդափոխության համակարգեր**
1)	Նախնական տաքացում և ներքին ջեռուցման համակարգ
2)	Օդորակիչ և ջեռուցման համակարգ
10.	**Էլեկտրասարքավորումներ**
1)	Ցանցում անվանական լարումը, Վ
2)	Վերալիցքավորվող մարտկոցներ
11.	**Արտաքին և ներքին լուսային սարքերի համապատասխանություն**
12.	**Հակահրդեհային համակարգ**
1)	Սրահում
2)	Վարորդի խցիկում
13.	**Հետին տեսանելիության հայելի**
14.	**Քարշակ սարք**
15.	**Տրանսպորտային միջոցների գույնը՝ ըստ RAL կատալոգի**
16.	**Տրանսպորտային միջոցների քանակը, այդ թվում՝ պահուստային**

17.	**Անվտանգությանը ներկայացվող պահանջներ**
1)	Տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայական
2)	Արտադրողի կողմից նախատեսված ցուցատախտակ կամ դրա համար նախատեսված հատված
3)	Վթարային ելքերի և նրանց կիրառման անհրաժեշտ միջոցներ
18.	**Լրացուցիչ պահանջներ**
1)	Տրանսպորտային միջոցի արտաքին դիզայն
2)	Այլ պահանջներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

29.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ